և որք եղեալ են նշանս և բանս խօսից պսակի ա-
մուսնութեան՝ յետս դարձցի և առաջի իմ լիցի ամե-
նայն, որ եղևն իսկ։ Եւ բազում չհաս և մեղօք կոյս
ընդ այրոյ և այրի ընդ պառնկի նշան եղեալ էին Դ
ամօք և Զ՝ յետս դարձոյց զամենեսեան։ Եւ ես ի նոյն
եղանակն, զոր դրամով վաճառէին զօրէնս՝ արգի-
լէր, մինչդեռ պսակաց շաբաթքն չէր, զի եղիկան
պահոցն նստաւ յաթոռ. և այնքն հնազանդեալ կա-
մայ և յակամայ վասն յորդորանացն և անաչառու-
թեանն։ Զի և ոչ նստաւ ի մի յեկեղեցի, այլ նախ
ի Սուրբ Նիկողոս շաբաթ մի, և տեսանէր զամենայն,
և ապա յԱստուածածին, նոյնպէս և յայլսն։ Եւ դաս
և քարոզ, չարեացն չարիք և բարեացն բարիք, ըզ-
գուշացուցանէր ամէնիմաստ վարդապետութեամբ իւ-
րով։ Բայց նզովեալ ոմն Մինէ անուն կին (պարպ)
մայր Իպրահիմի, որ նախ կարգեալ զորդին չհաս մե-
ղօք. եւ յորժամ կինն մեռանէր եւ լինէր այրի, եւ
առնէ զթոռ անողորմ Պետրոսի ումեմն կոյս ի կնու-
թիւն սև պսակօք։ Յետ ոչ բազում ամաց մեռաւ և
Իպրահիմն, մնաց ուստր մի և դուստր մի ծնունդք[1])
չարեաց։ Այս աղջկան նշան դնեն Այվատի որդոյ ու-
մեմն Գաբրէլի, զոր խնդրեցին հրաման պսակի, եւ
տեսանէր մեղօք այսպէս. Յակոբ տիրացու անիծեալ
ոմն առեալ է սան զկին Յակոբի ոմն, որ եղբօրորդի
է Գաբրէլիս, և առեալ է սան զնշանածն Գաբրէլին։
Եւ վարդապետն նզովեաց զեղոյս նշանին, և բա-
զումք եկին զմիտս սորա հաճել բազում կերպիւ, և
ոչ տայր տեղիք։ Մամ աղջկանն որ Մինէ ասացաւ,
բանվոր էր սուլթանի զայմախամին. ծանոյց նմա, և
սուլթանն առաքեաց զքէհեա պալթաճոյն առ վար-
դապետն թէ Կամք է սուլթանին և խնդիր է նորա

1) ծնունդ.